Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՈՒ ԴԻԱԿԻԶԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-870-19.02.2021-ՏՏԳԲ-011/0*) ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-870'-19.02.2021-ՏՏԳԲ-011/0)* ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը

1.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածում հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը: Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածում հանել 1-ին մասը: Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «հարազատները» բառը փոխարինել «ընտանիքի անդամները» բառերով և այլ տեխնիկական փոփոխություն: Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «պարբերություններ» բառը փոխարինել «պարբերություն» բառով, հանել 1-ին պարբերությունը և 2-րդ պարբերությունում հանել «միասնական էլեկտրոնային շտեմարանում» բառերը: Ամբողջ նախագծում առաջարկվել է «գերեզման օգտագործող» բառերը փոխարինել «գերեզման շահագործող» բառերով: Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «9-րդ պարբերությունում «վրահուղարկավորում՝» բառից հետո լրացնել «նոր» բառը, իսկ «իր անունով հաշվառված» բառերը փոխարինել «և գերեզման շահագործողի համաձայնությամբ» բառերով: Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածի 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «12-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ. «մահացածի հարազատներ կամ	Ընդունվել է	Ընդունվել է

			ընտանիքի անդամներ՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ կամ ոչ հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը»: Առաջարկվել է լրացնել նոր 6-րդ մաս. «15-րդ պարբերությունում «մեկ ընտանիքին հատկացվող գերեզմանատեղ» բառերը փոխարինել «գերեզմանփոխարինելկացվող գերեզմանատեղի վկայականը հպանվոմգերեզմանատեղի վկայականը նատեղի վկայականը հպանվոմ են Հայաստանի Հանրապետության» բառերով:		
2.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում հանել «բնագավառի» բառը և «իրականացումը» բառից հետո լրացնել «ինչպես նաև օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմանում վերահսկողության ապահովումը, որը կարող է իրականացվել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով.» բառերը: Առաջարկվել է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «քաղաքաշինության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից ներկայացրած նոր գերեզմանատների և գերեզմանների կառուցապատման և	Ընդունվել է	Ընդունվել է

			բարեկարգման տիպային ձևերի սահմանում (հաստատում)» Առաջարկվել է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում հանել «և թույլտվության տալը» բառերը: Առաջարկվել է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «գերեզմանի տրամադրման և սպասարկման պայմանագրի, վերահուղարկավորման և վրահուղարկավորման թույլտվության, գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյաններիտիպային ձևերի սահմանումը»		

3.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 3-րդ հոդվածում հանել 1-ին և 2-րդ մասերը: Առաջարկվել է նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել նոր խմբագրությամբ. «Լրացնել նոր 11-րդ կետ. «11) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ.»: Առաջարկվել է նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել նոր խմբագրությամբ. «Լրացնել նոր 1.1.-րդ կետ. «1.1. համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը, կամ կազմակերպությունը հանդիսանում է գերեզմանի շահագործող այն գերեզմանների համար, որոնք չունեն գերեզման շահագործող: Սույն մասով նախատեսված դեպքերում համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը, կամ կազմակերպությունն իրավունք ունի թույլատրել հուղարկավորել բացառապես այդ գերեզմանում հուղարկավորված մահացածի ընտանիքի անդամին:»:	Ընդունվել է	Ընդունվել է

4.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվել է օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:	Ընդունվել է	Ընդունվել է
5.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 5-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել նոր խմբագրությամբ. «1. Լրացնել նոր 1.1-ին մաս. «1.1. մահացածի հուղարկավորությունն իրականացվում է՝ 1) մահացածի կենդանության օրոք նրա բնակության վայրի կամ հաշվառման բնակավայրի, կամ ընտանիքի անդամի բնակության վայրի համար նախատեսված՝ բաց գերեզմանատանը, որի համար համայնքը սույն օրենքով նախատեսված կարգով գերեզմանի համար հողատարածք է տրամադրում գերեզման շահագործողին. 2) գերեզման շահագործողի համաձայնությամբ՝ առկա ընտանեկան գերեզմանում.	Ընդունվել է	Ընդունվել է

			3) մասնավոր գերեզմանատանը՝ մահացածի ցանկությամբ կամ նրա հուղարկավորության կազմակերպումն ստանձնողի ցանկությամբ. 4) օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գերեզմանատ~~ներ~~անը:»: Առաջարկվել է նախագծի 4-րդ հոդվածում լրացնել նոր 3-րդ մաս. «3-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ. «Մահացածի կամքի գրավոր արտահայտության՝ հուղարկավորության կազմակերպման վերաբերյալ անհնարինության կամ մահացածի կենդանության օրոք բնակության վայրի կամ նրա հաշվառման բնակավայրի, կամ ընտանիքի անդամի բնակության վայրի բացակայության դեպքում մահացածի մարմինը սահմանված կարգով հուղարկավորվում է նրա հուղարկավորության կազմակերպումը ստանձնողի՝ հուղարկավորության կազմակերպման վերաբերյալ կամքի արտահայտությամբ:»: Առաջարկվել է նախագծի 4-րդ հոդվածում լրացնել նոր 4-րդ մաս. «3-րդ մասի 3-րդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:»: Առաջարկվել է նախագծի 4-րդ հոդվածում լրացնել նոր 5-րդ մաս. «3-րդ մասի 4-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.		

			«Մահացածի հուղարկավորությունն իրականացնելու համար սահմանված կարգով տվյալ բնակավայրում գերեզմանատուն չլինելու դեպքում հուղարկավորությունը իրականացվում է բնակավայրին առավել մոտ գտնվող բաց գերեզմանատանը:»: Առաջարկվել է նախագծի 4-րդ հոդվածում լրացնել նոր 6-րդ մաս. «3-րդ մասի 5-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:»:		
6.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 6-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 5-րդ հոդվածում հանել 2-րդ մասը: Առաջարկվել է նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ: «Մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով գերեզման շահագործողին մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 2.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x1.0 մետր չափերով), իսկ ընտանեկան գերեզմանի կազմակերպման համար գերեզման շահագործողին անվճար հիմունքներով տրամադրվում է մինչև 12.5 քառակուսի մետր հողատարածք (2.5x5մետր չափերով):»: Առաջարկվել է նախագծի 5-րդ հոդվածի 4-	Ընդունվել է	Ընդունվել է

			րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ: «4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:»: Առաջարկվել է նախագծի 5-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ: «5-րդ մասում «դեպքում» բառից հետո լրացնել «գերեզման շահագործողի, կամ» բառերը:»:		
7.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 7-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ: «Գերեզման շահագործողին ով հանդիսանում է մահացածի ընտանիքի անդամ, իսկ ընտանիքի անդամ չունենալու դեպքում հուղարկավորությունը կամովին ստանձնած անձ, օրենսդրությամբ սահմանված կարգով իր շահագործմանը հանձնած գերեզմանի համար տրվում է գերեզմանի վկայական:»: Առաջարկվել է նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ. «օրենսդրության պահանջներին համապատասխան կառուցապատել և բարեկարգել իր շահագործմանը հանձնած	Ընդունվել է	Ընդունվել է

			գերեզմանը,»: Առաջարկվել է նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «փոխանցել իր իրավունքներն ընտանիքի անդամին»: Առաջարկվել է նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «ժառանգել իր շահագործման իրավունքը»: Առաջարկվել է հանել նախագծի 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածները:		

8.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 8-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 10-րդ հոդվածում հանել «եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերը: Առաջարկվել է նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով տրված գերեզմանի վկայականում նշված անձը՝ ով հանդիսանում է ընտանիքի անդամ, համարվում է սույն օրենքով սահմանված գերեզման շահագործող: Մյուս դեպքերում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում հուղարկավորվածի ընտանիքի անդամը, իսկ ընտանիքի անդամ չունենալու դեպքում հուղարկավորությունը կամովին ստանձնած անձը, կարող է ձեռք բերել գերեզմանի նոր վկայական՝ ստանալով գերեզման շահագործողի կարգավիճակ: Սույն մասում նշված ժամկետում գերեզման շահագործողի կարգավիճակ չգրանցվելու դեպքում տվյալ գերեզմանի շահագործման իրավունքն անցնում է համայնքին՝ մինչև տվյալ գերեզմանում հուղարկավորված մահացածի ընտանիքի անդամներից որևէ մեկի, իսկ ընտանիքի անդամ չունենալու դեպքում հուղարկավորությունը կամովին ստանձնած անձի կողմից գերեզման շահագործողի կարգավիճակ ձեռքբերելը:»: Առաջարկվել է նախագծի 10-րդ հոդվածում հանել 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ մասերը:	Ընդունվել է	Ընդունվել է

			Առաջարկվել է նախագծի 11-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Կառավարությունը պարտավոր է անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ կատարել Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1910-Ն որոշման մեջ՝ այն համապատասխանեցնելով սույն օրենքի պահանջներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:»:		
9.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածում «օրենսգրքի» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը, իսկ «շարադրել նոր խմբագրությամբ» բառերը փոխարինել «մասում» բառով: Առաջարկվել է նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով» բառերով.»:	Ընդունվել է	Ընդունվել է

10.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվել է օրենսգրքի 156.1-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին կետով. «1.1 Գերեզման շահագործողի կողմից գերեզմանի կառուցապատման, բարեկարգման և շահագործման օրենսդրությամբ սահմանված կանոնները, այդ թվում՝ քաղաքաշինական նորմերը խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով: Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
11.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Օրենսգրքի 156.1-րդ հոդվածի 3-րդ մասում հանել «անվճար կամ վճարովի հիմունքներով» բառերը:» Առաջարկվել է հանել նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածները:	Ընդունվել է	Ընդունվել է

12.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 4-րդ հոդված	Առաջարկվել է նախագծի 5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը՝ մասնավոր գերեզմանատների մասով, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերով,» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
13.	Պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Վարչական իրավախախտումների վերաբերյալ հայաստանի հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 5-րդ հոդված	Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ին:	Ընդունվել է	Ընդունվել է